Խ. Ս. Հ. Մ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Բնակչության հարկերի յեվ տուր-
քերի վարչություն, 1938 թ.
մայիսի 31-ի

№ 299/145.

*Մասկվա Կույբիշևի փող. № 9*

*Սխեմա յերեք*

*Թարգմանություն ռուսե-
րենից*

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅԵՎ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՖԻՆ-ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐԻՆ, ՅԵՐԿՐԱՅԻՆ. ՄԱՐԶԱՅԻՆ, ՈԿՐՈՒԳԱՅԻՆ, ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՖԻՆԲԱԺԻՆՆԵՐԻՆ

### ՇՐՋՖԻՆԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ.

*ԽՍՀ Միության Ֆինժողկոմատի 1938 թվի ապրիլի 28-ի № 221/130 հրահանգի համաձայն «շրջֆինբաժինների հարկային գործակալների աշխատանքների մասին», վորը հաստատված է ԽՍՀ Միության Ժողկոմխորհին կից անտեսական խորհրդի կողմից 1938 թ. ապրիլի 29-ին, շրջֆինբաժինների հարկային գործակալները պարտավոր են.*

*ա) վարել գյուղհարկի, գյուղական կուլտուրքի յեվ պարտադիր կապարային ապահովագրության վճարողների անձնական հաշիվները ըստ ձև № 1-ի.*

*բ) վարել մուծումների որագրերը ըստ ձև № 3-ի և հանձնել հարկային յեվ ապահովագրական վճարումների դրամական գումարները.*

*գ) ներկայացնել շրջֆինբաժնին սահմանված հաշվետվությունները։*

## ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

*1. Անձնական հաշիվները տարվում են գրքերում, վորոնք պետք է համարակալվեն, ժապավենվեն յեվ*

հաստատվեն շրջֆինբաժնի կնիքով յեվ շրջֆինբաժնի վարիչի ստորագրությամբ։

Այն դեպքերում, յերբ հարկային գործակալը սպասարկում է մեկ գյուղխորհրդից ավելի, յուրաքանչյուր գյուղխորհրդի համար վարվում է անձնական հաշիվների առանձին գիրք։

2. Անձնական հաշիվները տարվում է տարվա ընթացքում հաշված ընթացիկ տարվա գյուղհարկի յեվ կոոպարային ապահովագրության ծանուցագրերը վճարողներին հանձնելու մոմենտից մինչև մյուս տարին ծանուցագրերը հանձնելու ժամանակը։ Այդ ժամանակն անցնելուց հետո անձնական հաշիվները բացվում են նոր գրքերում։

3) Անձնական հաշիվների գրքերը հարմար օգտագործելու նպատակով, նպատակահարմար է համարվում յուրաքանչյուր գրքի սկզբում տանել վճարողների այբուբենական (ալֆավիտնի) ցուցակ։ Ալֆավիտնի ցուցակում պետք է ցույց տալ վճարողի ազգանունը, հայրանունը, անունը և գրքի թերթի №-ը, վորտեղ բացված է նրա անձնական հաշիվը։

4. Անձնական հաշվի համարը, հանդիսանում է նույն համարը, վորով գրանցված է տնտեսությունը գյուղխորհրդի տնտեսական գրքում։

5. Յեթե վճարողի անձնական հաշիվը լրիվ օգտագործվի, թեկուզ ըստ մեկ տեսակի վճարումի, շարունակությունը պետք է անցկացնել նոր յերեսի վրա գրքի վերջում, պահպանելով անձնական հաշվի համարը, ըստ վորում այդ նոր յերեսի վրա, պետք է փոխանցել բոլոր վճարումների չվճարված գումարների մնացորդները։

Անձնական հաշվի նախկին յերեսում նշում է արվում հաշիվը փոխանցելու մասին, իսկ նոր յերեսում առանձին տեսակի վճարումի համար հատկացված տեղի առաջին տողերում «փաստաթղթերի անվանումը» յեվ «ժամանակը» սյունակներում գրանցվում է «փոխանցված է այսինչ յերեսից»։ Այդ մասին նշանակվում է նաև ալֆավիտնի ցուցակում։

6. Գրանցումները անձնական հաշիվներում պետք է կատարել թանաքով, առանց ջնջումների։ Ուղղումները պետք է կատարել միայն կարմիր թանաքով յեվ յուրաքանչյուր դեպքում հաստատվի հարկային գործակալի ստորագրությամբ։

7. Անձնական հաշիվների գրքերը բացում է հարկային գործակալը, գյուղհարկի պարտադիր կոոպարային ապահովագրության վճարման ծանուցագրերի, վճարողների ցուցակների յեվ նախընթաց տարվա ապառքավորների ցուցակների հիման վրա։

Անձնական հաշիվները բացելու ժամանակ կատարվում է հետևյալ գրանցումները.

ա) վերնագրում գրվում է անձնական հաշվի համարը, վճարողի ազգանունը, անունը յեվ հայրանունը (անպայման լրիվ յեվ վոչ թե սկզբնատառերով) յեվ հարկման կատեգորիան (կոլտնտեսական, մենատնտես, բանվոր կամ ծառայող, կոոպերացված տնայնագործ).

բ) անձնական հաշվի այն մասում, վորտեղ գրանցվում են տվյալներ գյուղհարկի յեվ պարտադիր կոոպարային ապահովագրության մասին «փաստաթղթի անվանում» սյունակում պետք է ցույց տալ «վճարման ծանուցագիր», իսկ տարին, ամիս, ամսաթիվ սյունակում պետք է ցույց տալ վճարման ծանուցագրի դուրս գրելու ամիսը յեվ ամսաթիվը։ Հաջորդ սյունակներում ցույց է տրվում անցյալ տարվա ապառիկը, ընթացիկ տարվա վճարումներն ըստ վճարման ժամկետների, ընթացիկ տարվա վճարումների և ապառքների ընդհանուր գումարը յեվ նույնպես ծանուցագրեր դուրս գրելու ժամանակ ապառքի վրա հաշվվող տույժի գումարը։


(II-11429 աb)
II-31883գր

գ) հաշվի այն մասում, վորտեղ գրվում են տեղեկություններ գյուղական կուլտուրքի մասին, անց են կացվում նախընթաց տարվա գրքերից չվճարված ապառքները յև հաշվարկված տույժը հաշված առ անձնական հաշիվներ նոր գրքերում բացելու որը։

8. Հետևյալ տարվա սկզբում կուլտուրքի վճարման ծանուցագրեր դուրս գրելու ժամանակ հարկային գործակալը ծանուցագրի մեջ մտցնում է կուլտուրքի ապառքի գումարը յև հաշվարկված տույժը առ ծանուցագրերը դուրս գրելու որը.

Միաժամանակ անձնական հաշվի ապառ տողում կատարվում է հետևյալ գրանցումները.

ա) առաջին սյունակում «փաստաթղթի անվանումը» ցույց է տրված «վճարման ծանուցագիր» յև 2-րդ սյունակում—ծանուցագիր դուրս գրելու ժամանակը.

բ) 3-րդ սյունակում (գործարքի անվանումը) գրվում է «հաշվարկված է» յև նշվում է վճարման ծանուցագրում ցույց տված կուլտուրքի գումարը (անցյալ տարվա ապառք, ընթացիկ տարվա դրույքը յև տույժի գումարը հաշված առ ծանուցագիր դուրս գրելու որը)։

9. Ժամկետանց վճարումների—(ապառքների) վրա հաշվվում է տույժ յուրաքանչյուր անցած որվա համար, սկսած վճարման ժամկետն անցնելու հետևյալ որվանից մինչև ժամկետանց գումարը մուծելու որը ներառյալ։

Որինակ. Յեթե վճարման ժամկետը սահմանված է հոկտեմբերի 1-ը իսկ վճարումը կատարված է հոկտեմբերի 20-ին, այդ ժամանակ տույժը հաշվվում է հոկտեմբերի 2-ից մինչև 20-ը ներառյալ—այսինքն 19 որվա համար։

Տույժը հաշվվում է ապառքի լրիվ ռուբլու համար, ըստ վորում, յեթե ապառքի գումարը 50 կոպեկից ավելի յե, ընդունվում է մեկ ռուբլի, իսկ յեթե 50 կոպեկից պակաս է՝ չի հաշվվում։



Տույժը հաշվվում է յուրաքանչյուր անցած որվա համար։

ա) կոլտնտեսականների տնտեսություններից, մենատնտես գյուղացիական տնտեսություններից, տնայնագործներից յև այլ վճարողներից, բացի «բ» կետում նշվածներից— 0,1%—ի չափով.

բ) գյուղհարկի որենքի 95-րդ հոդ. կարգով հարկվող տնտեսություններից—1%ի չափով։

Ապառքները դատարանի միջոցով գանձելու ժամանակ, տույժ հաշվվում է առ գույքի վերգիր կազմելու որը։

Տույժի վրա տույժ չի հաշվվում։

Չվճարված տույժի գումարը գրանցվում է վճարողի անձնական հաշվում «մնում է վճարելու» յև մարվում է սահմանված հերթականությամբ։

Հարկումը վերանայելու հետևանքով, յեթե ապառքի գումարը շրջֆինբաժնի կարգադրությամբ գիջվում է կամ պակասեցվում է, այդ դեպքում դուրս գրվող գումարի վրա հաշվվող տույժը նույնպես գիջվում է, իսկ գանձված գումարը յենթակա յե վերադարձման կամ հաշվվում է վճարողի վրա հաշվվող ապառքների դիմաց։

10. Վճարումներ ընդունելու ժամանակ հարկային գործակալը պարտավոր է ստուգելու վճարողի անձնական հաշվի դրությունը, այսինքն պարզել, հաշվվում է արդյոք վճարողի վրա անցյալ տարվա ապառքներ կամ ընթացիկ տարվա ժամկետանց վճարներ։ Անձնական հաշվում կատարած գրանցումների հիման վրա հարկային գործակալը ընդունված գումարները բաշխում է անցյալ տարվա ապառքի, ընթացիկ տարվա վճարումի յև տույժի դիմաց ԽՍՀՄ-ի Ֆինժողկոմատի 1938 թ. ապրիլի 28-ի № 221/130 հրահանգով պարտքերը մարելու սահմանված կարգով։

11. Վճարողների անձնական հաշիվներում մուծված

գումարները գրանցվում է ազատ տողում, որտեղ գըր֊վում է «վճարված է»: Այդ գրանցումները կատարվում է հետևյալների հիման վրա.

ա) անդորրագրի պատճեն, որով գործակալը ընդու֊նել է վճարումը.

բ) շրջֆինբաժնի—ծանուցումը—վճարումը շրջֆին֊բաժնի գրամարկղը ընդունելու մասին:

Վճարված գումարները գրանցելուց հետո, լրացվում է «մնում է վճարելու» տողը:

Օրինակ—մուտք յեղած գումարների գրանցումների՝

ա) գյուղհարկ վճարողին հուլիսի 31-ին դուրս է գրված 50 ռուբլու վճարման ծանուցագիր: Բացի այդ, նրա վրա հաշվվում է անցյալ տարվա պարտք 10 ռուբ-լու չափով, որի վճարման ժամկետը անցել է անցյալ տարվա դեկտեմբերի 1-ին, պարտքի վրա հաշվված է տույժ վճարման ժամկետը անցնելու օրվանից, այսինքն դեկ-տեմբերի 2-ից մինչև հուլիսի 31-ը ներառյալ 242 օրվա համար 0,1% չափով օրական, կամ 2 ռ. 42 կ., այդ դեպ-քում անձնական հաշիվները բացելու ժամանակ պետք է կատարել հետևյալ գրանցումները՝

| Փաստաթղթի անվանումը | Ժամանակը | Գործարքի անվանումը | Անցյալ տարվա պարտքը | Ընթացիկ տարվա վճա-րումներ ըստ մուծման ժամկետների | | | | Ընդամենը վճարման ենթակա պարտք | Տոկոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1/IX (20%) | 1/X (20%) | 15/XI (35%) | 15/XII (25%) | | |
| Վճարման ծանուցագիր | 31/7 1938 | Հաշվարկ-ված է | 10.00 | 10.00 | 10 00 | 17.50 | 12.50 | 60.00 | 2.42 |

բ) վճարողը սեպտեմբերի 12-ին վճարել է 20 ռուբլի: Այդ գումարից առաջին հերթին պետք է մարվի



անցյալ տարվա պարտքը և հաշվվող տույժը: Բայց որովհետև առ վճարման ծանուցագիր դուրս գրելու օրը (այսինքն հուլիսի 31-ը) տույժը արդեն հաշվված է, այդ օրինակում պետք է լրացուցիչ հաշվել տույժ օգոստո-սի մեկից սկսած մինչև սեպտեմբերի 12-ը ներառյալ, այ-սինքն, 43 օրվա համար: Այդ 43 օրվա համար տույժի գումարը կկազմի 43 կոպ., իսկ ամբողջ անցած ժամա-նակի համար կկազմի (2 ռ. 42 կ.+ 43 կ.)=2 ռ. 85 կ. վճարված գումարի մնացորդը (20 ռ.—10 ռ.—2 ռ. 85 կ.) կկազմի 7 ռ. 15 կոպ., որը պետք է հաշվել ընթացիկ տարվա մուծման առաջին ժամկետի վճարումի դիմաց:

Բացի այդ մուծման առաջին ժամկետի ժամկետանց վճարումի (10 ռ.) պետք է հաշվվի 11 օրվա տույժ 11 կոպեկի չափով: Այդ տույժի գումարը պետք է գրանցել անձնական հաշվի «մնում է վճարելու» տողում:

Այդ օրինակով անձնական հաշվում գրանցումները կատարվում է հետևյալ կարգով՝

| Փաստաթղթի անվանումը | Ժամանակը | Գործարքի անվանումը | Անց. տար. պարտքը | Ընթացիկ տարվա վճա-րումներ ըստ ժամկետ-ների | | | | Ընդամենը վճարման ենթակա պարտք | Տոկոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1/IX | 1/X | 15/XI | 15/XII | | |
| Վճարման ծանուցագիր | 31/7 1938 | Հաշվարկ-ված է | 10.00 | 10.00 | 10.00 | 17.50 | 12.50 | 60.00 | 2.42 |
| Անդորրագիր № 1843 | 12/9 1938 | Վճարված է | 10,00 | 7.15 | — | — | — | 17.15 | 2.85 |
| | | Մնում է վճարելու | — | 2.85 | 10.00 | 17.50 | 12.50 | 42.85 | 0.11 |

գ) Վճարողը հոկտեմբերի 15-ին վճարել է ևս 20 ռ. այդ գումարից առաջին հերթին մարվում է մուծման ա-

առաջին ժամկետից մնացած 2ռ. 85 կ. և այդ գումարի տույժը։

Տույժը հաշվվում է անցյալ գրանցումից սկսած ժամանակից, այսինքն սեպտեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 15-ը, կամ անցած 33 օրվա համար, վորը կազմում է 10 կոպ., իսկ ընդամենը պետք է գանձվի տույժ մուծման առաջին ժամկետի վճարումի համար 21 կոպ.։ Վճարված գումարի մնացորդը (20-2 ռ. 85 կ. -21 ) կկազմի 16 ռ. 94 կոպ., վորից 10 ռուբլին, հաշվվում է մուծման 2-րդ ժամկետի վճարումի դիմաց և հետո մարվում է այդ գումարի վրա հաշվվող տույժը սկսած նոյեմբերի 2-ից մինչև 15-ը, կամ 14 օրվա համար (14 կոպ.), իսկ մնացած 6 ռ. 80 կ. հաշվվում է մուծման 3-րդ ժամկետի վճարման դիմաց։ Գանձված տույժի ամբողջ գումարը կազմում է 35 կ. (21+14)։

Այդ դեպքում անձնական հաշվում գրանցումները կատարվում է հետևյալ կարգով՝

| Փաստաթղթի անվանումը | Ժամանակը | Գործարքի անվանումը | Անցյալ տարվա պարտք | Ընթացիկ տարվա վճարումներ ըստ ժամկետների | | | | Ընդամենը վճարման ենթակա գումարը | Տույժ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1\|IX | 1\|X | 15\|XI | 15\|XII | | |
| Վճարման ծանուցագիր | 31\|7 1938թ. | Հաշվարկված է | 10.00 | 10.00 | 10.00 | 17.50 | 12.50 | 60.00 | 2.42 |
| Անդորրագիր № 15843 | 12\|9 1938թ. | Վճարված է | 10.00 | 7,15 | — | — | — | 17.15 | 2.85 |
| | | Մնում է վճարելու | — | 2.85 | 10,00 | 17.50 | 12.50 | 42.85 | 0.11 |
| Անդորրագիր № 16009 | 15\|10 1938թ. | Վճարված է | — | 2.85 | 10,00 | 6.80 | — | 19.65 | 0.35 |
| | | Մնում է վճարելու | — | — | — | 10.70 | 12.50 | 23.20 | — |

1. Վճարողը նոյեմբերի 25-ին մարում է վճարումների ամբողջ մնացորդը։ Նրանից պետք է գանձվի՝ մուծ-



ման 3-րդ ժամկետից մնացած ժամկետանց գումարը 10 ռ. 70 կ. տույժ այդ գումարի վրա նոյեմբերի 16-ից մինչև 25-ը, կամ անցած 10 օրվա համար 11 կոպ. և նույնպես մուծման 4-րդ ժամկետի հերթական վճարումը 12 ռ. 50 կոպ., այսինքն ընդամենը պետք է ստանալ 23 ռ. 31 կոպ.։

Այդ օրինակով, անձնական հաշվում գրանցումները պետք է կատարել հետևյալ կերպով.

| Փաստաթղթի անվանումը | Ժամանակը | Գործարքի անվանումը | Անցյալ պարտք | Ընթացիկ տարվա վճարումները ըստ ժամկետների | | | | Ընդամենը վճարման ենթակա գումարը | Տույժ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1\|IX | 1\|X | 15\|XI | 15\|XII | | |
| Անդորրագիր № 1[illegible]1[illegible]9 | 25\|11 1938թ. | Վճարված է | — | — | — | 10.70 | 12.50 | 23.20 | 0.11 |

12. Հարկումը ստուգելու հետևանքով, յեթե սկըզբում հաշվարկված վճարումի գումարը ավելանում է, այդ՝ դեպքում վճարողի համար շրջֆինբաժինը դուրս է գրում լրացուցիչ վճարման ծանուցագիր, վորի մեջ ցույց է տալիս լրացուցիչ հաշվարկված վճարումի գումարը։

Լրացուցիչ հաշվարկված գումարի ծանուցագրի հիման վրա, անձնական հաշվի ազատ տողում «գործարքի անվանում» սյունակում գրանցվում է «լրացուցիչ հաշվարկված է»։

13. Վճարման ծանուցագրերը հանձնելուց հետո, յեթե շրջգործկոմի կամ շրջֆինբաժնի կողմից վճարողին կարվի լրացուցիչ դեղչեր հաշվարկված գումարից, նման դեպքերում այդ մասին շրջֆինբաժինը հայտնում է հարկային գործակալին։ Զիջված գումարների ծանուցումի հիման վրա վճարողի անձնական հաշվի ազատ տողում «գործարքի անվանումը» սյունակում գրվում է «զիջված է»

իսկ շրջֆինբաժնի ծանուցումի վրա նշում ե կատարվում անձնական հաշվում գրանցելու մասին։

14. Զիջված և լրացուցիչ հաշվարկված գումարների բաշխումը ըստ ժամկետների կատարվում ե նույն տոկոսներով, վոր չափով կատարված ե սկզբում հաշված վճարումի դրույքը, այն դեպքերում, յերբ մուծման առաջին ժամկետի վճարումը արդեն մուծված ե, առաջին ժամկետին, վորը հասանելիք զիջված գումարը հաշվվում ե հետագա մուծման հերթական ժամկետի վճարումից, իսկ լրացուցիչ հաշվարկված գումարները բաշխվում ե ըստ մնացած մուծման ժամկետների վճարումների հավասար չափերով։

Որինակ 1-ին—Գյուղհարկ վճարողին ուղարկված ե 80 ռ. ծանուցագիր չորս ժամկետներում մուծելու համար առ 1-ը սեպտեմբերի 20 %, կամ 16 ռուբլի, առ 1-ը հոկտեմբերի 20% կամ 16 ռուբլի առ 15-ը նոյեմբերի 35 %, կամ 28 ռուբլի, յեվ առ 15-ը դեկտեմբերի 25%, կամ 20 ռուբլի։ Մուծման առաջին ժամկետին հասանելիք գումարը վճարողը լրիվ մուծել ե (16 ռուբլի)։ Դրանից հետո նրա հարկի գումարը շրջֆինբաժնի կողմից թողնված ե 60 ռուբլի։

Այսինքն պակասեցված ե 20 ռ.։ Այդ գումարը անձնական հաշվում պետք ե բաշխել ըստ մնացած ժամկետների՝ 2-րդ ժամկետի համար 40% (1 յեվ 2 ժամկետները) կամ 8 ռուբլի, 3-րդ ժամկետի համար 35% կամ 7 ռուբլի յեվ 4-րդ ժամկետի համար 25% կամ 5 ռուբլի, տվյալ որինակում յեթե վճարողը արդեն վճարել ե յերկու ժամկետների հասանելիք վճարումները (այսինքն 32 ռուբլի) այդ դեպքում զիջված գումարը պետք ե բաշխել հետեվյալ կերպ—3-րդ ժամկետի համար 75%, կամ 15 ռ. և 4-րդ ժամկետի համար—5 ռուբլի։

Որինակ 2-րդ—վճարողին ուղարկված ե գյուղհարկի ծանուցագիր 60 ռուբլու։ Առաջին ժամկետին հասանելիք գումարը վճարողը լրիվ մուծել ե (12 ռուբլի), դրանից հետո շրջֆինբաժնի վորոշմամբ սկզբում հաշվարկված հարկի գումարը բարձրացված ե մինչև 72 ռուբլի, այսինքն ավելացրված ե 12 ռուբլով։ Այդ լրացուցիչ հաշվարկված հարկի գումարը բաշխվում ե ըստ վճարման մնացած 3 ժամկետների հավասար չափերով, այսինքն 4 ռուբ. յուրաքանչյուր ժամկետի համար։

15. Գերվճարումների վերադարձումները և հաշվակցումները (зачет) կատարում են Պետբանկի բաժանմունքները, շրջֆինբաժնի գրավոր կարգադրությունների համաձայն։

Հարկերի գերավճարումներ գոյանալու դեպքերում՝ հարկային գործակալը պետք ե պարզի, չի՞ հաշվվում արդյոք վճարողի վրա ուրիշ հարկային ապառքներ։ Յեթե վճարողի վրա հաշվվում ե ուրիշ հարկային ապառքներ, այդ դեպքում գերավճարումը հաշվվում ե այդ ապառքների դիմաց։ Յեթե վճարողի վրա չի հաշվվում ուրիշ հարկային ապառքներ, պետք ե վերադարձնել վճարողին գոյացած գերավճարումները։

Գերավճարում գոյանալու դեպքում հարկային գործակալը պարտավոր ե անմիջապես հայտնել շրջֆինբաժնին, ցույց տալով ազգանունը, անունը, հայրանունը (լրիվ և վոչ թե սկզբնատառերով), բնակավայրը (գյուղխորհուրդ, գյուղ) վճարողի անձնական հաշվի №-ը, վո՞ր վճարումից ե գոյացել գերավճարումը և այդ գերավճարումի չափը։ Բացի այդ, նույն տեղեկությունում պետք ե նշվի՝ հաշվվու՞մ ե արդյոք վճարողի վրա ուրիշ հարկերից ապառք, ապառքի գումարը և տույժի գումարը հաշված առ գերավճարում գոյանալու որը։

16. Վճարողի անձնական հաշվում գերավճար գոյա-

նալու դեպքում «Մնում է վճարելու» տողում մտցվում է ուղղում և այդ բառի փոխարեն գրվում է «գերավճար»:

Նույն այդ տողում ցույց է տրվում, թե երբ է ուղարկված շրջֆինբաժնին ծանուցում, գերավճար գոյանալու մասին շրջֆինբաժնի կարգադրությունը գերավճարումը կամ հաշվակցումը կատարելու մասին, Պետբանկի կողմից կատարելուց հետո, շրջֆինբաժինը կատարման մասին հայտնում է հարկային գործակալին: Այդ տեղեկության հիման վրա հարկային գործակալը վճարողների անձնական հաշվի ազատ տողում գերավճարում վերադարձնելու դեպքում գրում է «վերադարձված է», իսկ հաշվակցելու դեպքում գրվում է «հաշվակցված է այսինչ հարկի դիմաց»:

Անձնական հաշվում, որ վճարումի դիմաց կատարված է գերավճարումը, նշանակվում է «հաշվարկված է այսինչ հարկի գոյացած գերավճարումից»:

17. Հետևյալ տարում նոր գրքերում անձնական հաշիվներ բացելու ժամանակ, հարկային գործակալը հին գրքում կատարում է հետևյալ գրանցումները:

ա) այն անձնական հաշիվներում, որով լրիվ մուծված է հաշվարկված բոլոր գումարները և ապառք չի հաշվում, հարկային գործակալը կատարում է նշում «հաշիվը փակված է», ցույց տալով ամիս, ամսաթիվը և գործակալի ստորագրությունը.

բ) այն անձնական հաշիվներում, որտեղ վճարողների վրա հաշվվում է ապառքներ, այդպիսիները փոխանցվում են նոր հաշիվների մեջ, իսկ հին գրքերում ապառքավորի անձնական հաշվում կատարվում է նշում «փոխանցված է 193 թ· գրքի № — անձնական հաշիվը» յեվ ստորագրում է հարկային գործակալը: Վերջացած անձնական հաշիվների գրքերը պահվում են հարկային գոր-



ծակալի մոտ մեկ տարվա ընթացքում և հետո հանձնվում է շրջֆինբաժնի արխիվին:

## ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՈՐԱԳՐԵՐԻ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

18. Վճարումների որվա մուծումները գրանցվում է ձև № 3 որագրի մեջ ընդհանուր որվա գումարով, ընդունված գումարների անդորրագրերի պատճենների հիման վրա, բաշխելով առանձին—անցյալ տարվա ապառքների—ընթացիկ տարվա վճարումներ և տույժ:

Բացի այդ մուտք յեղած ընդհանուր գումարները բաշխվում է վճարողների յերկու կատեգորիայի—կոլտնտեսականներ և մենատնտեսներ: Ընդ որում կոլտնտեսականների դրույքներով հարկվող բանվորներից, ծառայողներից և նույնպես կոոպերացված տնայնագործներից մուտք յեղած գումարները ցույց են տրվում կոլտնտեսականների հետ միասին:

19. Մուծման որագրերը հարկային գործակալների կողմից տարվում է առանձին—գյուղհարկի համար, առանձին գյուղական կուլտուրքի համար և առանձին պարտադիր կոոպարային ապահովագրության համար:

Շրջֆինբաժնի դրամարկղը մուտք յեղած գումարները հարկային գործակալների որագրերում չեն գրանցվում:

20. Դրամական գումարները պետական բանկի բաժանմունքներին հանձնելու կամ փոստի բաժանմունքի միջոցով փոխադրելու ժամանակ, հարկային գործակալը ուղեկցող տեղեկագրերի (ձև № 2) պատճենների կամ փոստի անդորրագրերի հիման վրա, որագրում նշանակում է դրամի հանձնման կամ փոստի միջոցով փոխադրելու ժամանակը, հանձնված կամ փոխադրված ուղեկցող տեղեկագրի կամ փոստի անդորրագրի №-ը և հանձնված դրամի գումարը:

21. Յուրաքանչյուր ամսվա 10-ին, 20-ին, 30-ին

(31)-ին՝ հաշվետվությունները կազմելու համար, որագրերում դուրս է բերվում յերկու հանրագումար, մեկը տասնօրյակի համար և մյուսը յեռամսյակի սկզբից։

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

22. Գյուղհարկի կամ գյուղական կուլտտուրքի հաշվարկը վերջացնելուց հետո, հարկային գործակալը պարտավոր է վճարողների ցուցակում դուրս բերել ընդհանուր գումարները, ըստ գյուղխորհրդի և ցուցակները հանձնել շրջֆինբաժնին։

Այդ հանրագումարների հիման վրա, շրջֆինբաժինը կազմում է ըստ շրջանի սահմանված ձևի հաշվետվությունները, գյուղհարկի կամ գյուղկուլտտուրքի վճարողների հաշվառման և հարկի հաշվարկման արդյունքների մասին։ Հաշվետվություններ կազմելուց հետո շրջֆինբաժինը ցուցակները վերադարձնում է հարկային գործակալներին։

23. Յուրաքանչյուր ամսվա 10, 20, 30 (31)-ին, որվա վերջում հարկային գործակալը մուծումների որագրերի հիման վրա կազմում է տասօրյա հաշվետվություն, որան կցված № 5 ձևով և ուղարկում է շրջֆինբաժին։ Այդ հաշվետվությունում տեղեկությունները ցույց է տրվում աճող թվերով յուրաքանչյուր յեռամսյակի սկզբից։

24. Յուրաքանչյուր յեռամսյակը լրանալուց հետո, անձնական հաշիվների հիման վրա հարկային գործակալը կազմում է ձև № 6 հաշվետվությունը անցյալ տարիների ապառքների և ընթացիկ տարվա վճարումների մնացորդների մասին։

Հաշվետվությունը կազմվում է առ 1-ը հունվարի, 1-ը ապրիլի, 1-ը հուլիսի և 1-ը հոկտեմբերի տվյալներով



և ներկայացվում շրջֆինբաժնին յեռամսյակին հաջորդող ամսի 10-ին։

Նախքան այս հաշվետվության կազմելը հարկային գործակալը պարտավոր է ստուգելու անձնական հաշիվների գրանցումները, համեմատելով վճարողների ցուցակների տվյալների հետ (հաշվի առնելով նաև լրացուցիչ հաշվարկված և զիջված գումարները) և որագրերում գրանցված մուծումների տվյալների հետ։ (Հաշվի առնելով նաև գերավճարումների վերադարձումները և հաշվակցումները)։

Որինակ․ 1 ըստ գյուղհարկի վճարողների ցուցակների յենթակա յեր վճարման գյուղհարկ, ներառյալ անցյալ տարվա ապառքների գումարը 5000 ռուբլի, լրացուցիչ հաշվարկված է 100 ռուբլի և զիջված է 400 ռուբ. հետևապես վճարման յենթակա վերջնական գումարը կազմում է(5000+100—400=4700) ռուբլի։

2. Ստուգման ժամանակամիջոցում մուտք յեղած գումարը ըստ որագրերի կազմում է 4500 ռուբլի, նույն թվում 100 ռուբլի տույժ։ Այս գումարից պետք է հանել գանձված տույժի գումարը (100 ռ.) և նույնպես վերադարձրած կամ ուրիշ վճարումների դիմաց հաշվարկված գերավճարումների գումարը—յենթադրենք այդպիսինի գումարը կազմում է 130 ռուբլի։ Բացի դրանից ստացված գումարին պետք է ավելացնել նաև շրջֆինբաժին մուտք յեղած գումարները և տվյալ վճարումի դիմաց ուրիշ վճարումներից գոյացած գերավճարումները, վորոնք կազմում են յենթադրենք 150 ռուբլի։ Այդպիսով մուտք յեղած ընդհանուր գումարը հաշվի առնելով բոլոր գործարքները կկազմի (4500—100—130+150)=4420 ռուբլի։

3. Վճարողների ցուցակների և մուծումների որագրերի այդպիսի հաշվարկման միջոցով ստացվում է ապառքի գումարը (4700—4420)=280 ռ.։ Այդ նույն գու-

մարը պետք է ստացվի նաև վճարողների անձնական հաշիվների գրանցումները հաշվելուց։ Եթե այդպիսի հաշվարկումը տալիս է այլ գումարներ, նման դեպքում հարկային գործակալը պետք է ստուգի անձնական հաշիվների և օրագրերի մուծումների գրանցումները։

Անձնական հաշիվներում կատարած գրանցումները ստուգվում են հետևյալ փաստաթղթերով՝

ա) հաշվարկված վճարումների գումարը ըստ վճարողների ցուցակների․

բ) լրացուցիչ հաշվարկված, զիջված, վերադարձված և հաշվարկված գումարները—շրջֆինբաժնի համապատասխան փաստաթղթի.

գ) մուտք յեղած գումարները—ըստ անդորրագրերի պատճենների։

Մուծումների օրագրերի գրանցումները ստուգվում են անդորրագրերի պատճեններում ցույց տրված գումարները հաշվելու միջոցով։

25․ Ձև № 5 և 6 հաշվետվությունները կազմվում է յերկու օրինակից, վորոնցից մեկական օրինակ ուղարկվում է շրջֆինբաժին, իսկ յերկրորդ օրինակը մնում է հարկային գործակալի գործերում։

## ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

26․ Բոլոր փաստաթղթերը հարկային գործակալները պետք է պահեն խիստ հաշվառման տակ։ Յուրաքանչյուր վճարումի համար պետք է պահվեն հետևյալ գործերը․

1․ Վճարողների ցուցակներ, 2) շրջֆինբաժնի դրամարկղում մուտք յեղած գումարների փաստաթղթեր, 3) շրջֆինբաժնի ծանուցումները լրացուցիչ հաշվարկված և զիջված գումարների մասին, 4) շրջֆինբաժնի ծանուցումները գերավճարումների վերադարձումների և հաշվակցումների մասին, 5) փաստաթղթեր դրամները հանձնելու մասին (ուղեկցող տեղեկագրերի պատճենները և փոստի անդորրագրեր), 6) տասօրյա և յեռամսյակային հաշվետվություններ։



Բացի այդ, հատուկ հաշվառմամբ են պահվում վճարումների ընդունելու անդորրագրերի պատճենները, վորոնք չպետքե պոկել, այլ մնում են անդորրագրքույկի մեջ

Առդիր № 5 և 6 հաշվետվության ձևեր։

ԽՍՀ Միության ֆինանսական ժողովրդական
կոմիսարի տեղակալ Դ. ՇԱՏԱԼՈՎ

Կցում. ԽՍՀՄ ՖԺԿ-ի 1938 թ. մայիսի
31-ի № 299/145 հրահանգի

Ձեվ № 5

Տասրյա հաշվետվության հարկային և ապահովագրական

մուծումների մասին ըստ________________ գյուղխորհրդի________

__________________193 թ. մինչև__________________193 թ.
(յեռամսյակի սկիզբը) (հաշվետու ժամանակամիջոցը)

| №№ ըստ կարգի | Վճարումների անվանումը | Նախորդ տարվա մնացորդը | Նույն թվում | | Ընդհանուր գումարից մուտք է գրվել | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Հաշվետու տարվա ընթացքում | Տույժ | Միութենական բյուջեում | Տեղական բյուջեում |
| 1 | Գյուղհարկ . . . . . . . . | | | | | |
| 2 | Գյուղական կուլտուրբ . . . | | | | | |
| 3 | Պարտադիր կոոպարային ապահովագրություն . . . . | | | | | |

ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ (ստորագրություն)

«______»____________193 թ.

21 ОКТ. 1938
497
11
31883

Պատ. խմբ. Բ Ջավահիրյան
Թարգմանիչ Ռ. Ավագյան
Գլավլիտի լիազոր. ա—4047, պատվեր 529
Տիրաժ 1500

«Ս. Հայաստանի» տպարան II Կնունյանցի, № 86